## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 24

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով` *համայնքի ավագանին որոշում է.*

1.Նոր Խարբերդ համայնքում 2016 թվականի տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին:

2.Նոր Խարբերդ համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

3.Նոր Խարբերդ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Նոր Խարբերդ համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքի նախագծին հավանություն տալու մասին:

5. Նոր Խարբերդ համայնքի 2015 թվականի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 25-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2016 թվականին սահմանել տեղական տուրքեր և վճարներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 11-ի
թիվ 25-Ն որոշման

*1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2016 թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.*

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000 դրամ.
բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.
բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.
բդ/ 3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

*1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի

գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

*1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:*

*1.4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝*

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

*1.5. Համայնքի տարածքում՝*

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ,

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ,

գա/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

-հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 դրամ,

-ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ:

*1.6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50000դրամ,

գ/ բաղնիքների / սաունաների/ համար`200 000 դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար` 500 000 դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար` 250 000 դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար` 100 000 դրամ:

*1.7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել`*

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 1500 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 դրամ.

գ/այլ արտաքին գովազդի համար` 1000 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար` 700 դրամ:

1.8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 1000 դրամ.

1.9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

1.10 Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

*2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2016 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.*

2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.3. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

2.4. Գյուղապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար` համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:

2.5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար գյուղապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.

ա/ ըստ ծավալի` մեկ խորանարդ մետր աղբի համար` 1000 դրամ,

բ/ըստ զանգվածի` մեկ տոննա աղբի համար` 3000 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ` Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 26

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված 1
Նոր Խարբերդ գյուղական համայնքի
ավագանու 11 դեկտեմբերի 2015 թվականի
թիվ 26 որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

### ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 2015 ԹՎԱԿԱՆ

| | 013 անվանումը | քանակ | գինը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | գ/պ վարչական շենք | 1 | 41301100 | 41301100 |
| 2 | մշակույթի տուն | 1 | 88570600 | 88570600 |
| 3 | մանկապարտեզ | 1 | 6220800 | 6220800 |
| 4 | N 4 կաթսայատուն | 1 | 2800 | 2800 |
| 5 | N 5 կաթսայատուն | 1 | 2300 | 2300 |
| 6 | ավտոմեքենա ՎԱԶ 2107 | 1 | 2570000 | 2570000 |
| 7 | վագոն տնակ | 1 | 60000 | 60000 |
| 8 | ավտոմեքենաԼԱԴԱ21214 | 1 | 5650000 | 5650000 |
| 9 | երկաթյա նստարաններ | 13 | 62497 | 974953 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 145352553 |
| | | | | |
| | հեռուստացույց SANYO | 1 | 88978 | 88978 |
| | տպիչ HPLT 1300 | 1 | 233966 | 233966 |
| | համակարգիչ InfIP4 | 1 | 427500 | 427500 |
| | տպիչ քսերոքս canon | 1 | 380000 | 380000 |
| | կարգավորիչ UPS 600VA | 1 | 30500 | 30500 |
| | համակարգիչ | 1 | 272020 | 272020 |
| | տպիչ canon piximp | 1 | 27000 | 27000 |
| | կարգավորիչ UPS 600VA | 1 | 26000 | 26000 |
| | համակարգիչ PIV | 1 | 263460 | 263460 |
| | տպիչ canon LBP2900 | 1 | 44640 | 44640 |
| | տպիչ canon LBP2900 | 1 | 54180 | 54180 |
| | համակարգիչ P4 | 1 | 300000 | 300000 |
| | հեռուստացույցSamsung | 1 | 361000 | 361000 |
| | համակարգիչ E5200 | 1 | 296000 | 296000 |
| | DVD BBK | 1 | 70000 | 70000 |
| | օդորակիչ ELEKTROLUX | 1 | 290000 | 290000 |
| | համակարգիչ | 1 | 448000 | 448000 |
| | ջրի սարք BEKO 2200TT | 1 | 105500 | 105500 |
| | Համակարգիչ | 2 | 229166 | 549998 |
| | տպիչ սարք | 1 | 75000 | 90000 |
| | սառնարան H1SBN | 1 | 96000 | 96000 |
| | հեռուստացույց TOSHIBA | 1 | 130000 | 130000 |
| | մեծ գրասեղան | 1 | 328000 | 328000 |
| | ժուռնալի սեղան | 1 | 110000 | 110000 |
| | գ/պ-ի աթոռ | 1 | 283000 | 283000 |
| | համակարգիչ | 1 | 265000 | 265000 |
| | համակարգիչ | 2 | 16666 | 400000 |
| | ստեղնաշար | 1 | 9166 | 11000 |
| | մոնիտոր | 1 | 41666 | 50000 |
| | բազմաֆ.տպող սարք | 1 | 65833 | 79000 |
| | անվադող.էլ.մարտ.,օդախց | 4 | 122500 | 147000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 6257742 |
| | | | | |

| 016 անվանումը | | քանակ | գին | գումար |
|---|---|---|---|---|
| | աթոռ | 12 | 20475 | 245700 |
| | աթոռ ռոլիկով | 5 | 23400 | 117000 |
| | տնօրենի աթոռ | 1 | 35100 | 35100 |
| | համակարգչի սեղան | 1 | 42524 | 42524 |
| | գրասեղան | 1 | 48000 | 48000 |
| | գրասենյակի աթոռ | 1 | 12000 | 12000 |
| | գրասեղան | 10 | 45000 | 450000 |
| | աթոռ | 40 | 13250 | 530000 |
| | տնօրենի աթոռ | 2 | 65000 | 130000 |
| | գրապահարան | 10 | 80000 | 800000 |
| | պահարան | 2 | 90000 | 180000 |
| | գրասեղան | 1 | 140000 | 140000 |
| | մեծ գրասեղան | 1 | 170000 | 170000 |
| | շերտավարագույր | 52,9 | 5501 | 291100 |
| | թիկնաթոռ | 2 | 23000 | 46000 |
| | տակդիր TVS 2201 | 1 | 93300 | 93300 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 3330724 |

| 070 անվանումը | | քանակ | գինը | գումարը |
|---|---|---|---|---|
| | երկաթյա պահարան | 7 | 231 | 1617 |
| | գրասեղան | 3 | 308 | 924 |
| | դիմադիր սեղան | 1 | 154 | 154 |
| | հեռախոսի ապարատ | 2 | 3500 | 7000 |
| | աղբաման | 8 | 667 | 5336 |
| | հաշվիչ մեքենա | 4 | 5000 | 20000 |
| | ՀՀ դրոշ | 1 | 37500 | 37500 |
| | հաշվիչ մեքենա | 2 | 2500 | 5000 |
| | ալեհավաք | 1 | 7000 | 7000 |
| | սեղանի հավաքածու | 1 | 25000 | 25000 |
| | ֆլեշկա | 2 | 4166 | 10000 |
| | հոսանքակարգավորիչ | 2 | 20833 | 50000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 515781 |

Հանձնաժողովի նախագահ՝ Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Յու. Վարդանյան

անդամներ՝

1.Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գ.Մարգարյան

2.Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Վ.Մարտիրոսյան

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ 2015 ԹՎԱԿԱՆ

| 013 անվանումը | քանակ | գին | գումար |
|---|---|---|---|
| դաշնամուր,,Երևան,, | 1 | 2310 | 2310 |
| քար,,Մաղևո,, | 1 | 1230 | 1230 |
| պրոյեկտոր BCBING2500 | 1 | 1050000 | 1050000 |
| բարձրախոսBERINGPIS20 | 4 | 116250 | 465000 |
| ուժեղացուցիչBERINPH | 1 | 32000 | 32000 |
| լուսային էֆեկտPAP64 | 4 | 37200 | 148800 |
| D1212SPANEPD7250 | 2 | 205000 | 410000 |
| տալուխ բարձրախոսի | 20մ | 700 | 14000 |
| միկրաֆոնSNURSM58 | 1 | 110000 | 110000 |
| լուսային էֆեկտ | 1 | 150000 | 150000 |
| MD SONI | 1 | 15000 | 15000 |
| տոնիդոր SK120A | 1 | 130000 | 130000 |
| միկրաֆոնSNRESM57 | 2 | 12000 | 24000 |
| դիվան | 3 | 120000 | 360000 |
| ժուռնալի սեղան | 3 | 70000 | 210000 |
| պուֆիկ | 2 | 40000 | 80000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 3202340 |

| 016 անվանումը | քանակ | գին | գումար |
|---|---|---|---|
| գեղ.նկար,,Չմեռ,, | 1 | 60904 | 60904 |
| գեղ.նկար,,Սևան,, | 1 | 69594 | 69594 |
| գեղ.նկար,,Ամառ,, | 1 | 65211 | 65211 |
| գեղ.նկար,,Գարուն,, | 1 | 69594 | 69594 |
| գեղ.նկար,,Բջնի,, | 1 | 78284 | 78284 |
| գեղ.նկար,,Երեկո,, | 1 | 65211 | 65211 |
| ,,Ղարաբաղյան բնանկար,, | 1 | 78284 | 78284 |
| շերտավարագույր | 75.8մ | 6500 | 492700 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 979782 |

| 070 անվանումը | քանակ | գին | գումար |
|---|---|---|---|
| հայելի | 2 | 2600 | 5200 |
| բահ | 2 | 2200 | 4400 |
| լապատկա | 2 | 2200 | 4400 |
| փոցխ | 2 | 2000 | 4000 |
| նկ.Ավ.Իսահակյան | 1 | 154 | 154 |
| նկ. Չարենց | 1 | 154 | 154 |
| նկ.Կոմիտաս | 1 | 154 | 154 |
| շեփոր | 1 | 308 | 308 |
| տոնածառ | 1 | 156000 | 156000 |
| տոնածառի խաղալիքներ | | 94000 | 94000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 271770 |

Հանձնաժողովի նախագահ՝

անդամներ՝

Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Յու. Վարդանյան

1.Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գ.Մարգարյան
2.Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Վ.Մարտիրոսյան

# ԳՐԱԴԱՐԱՆ 2015 ԹՎԱԿԱՆ

| 070 անվանումը | | քանակ | գին | գումար |
|---|---|---|---|---|
| | ընթերցասեղան | 2 | 182 | 364 |
| | ժուռնալի սեղան | 1 | 200 | 200 |
| | սեղան 1 տումբա | 1 | 231 | 231 |
| | կատալոգի արկղ | 2 | 173 | 346 |
| | երկաթյա դարակներ | 43 | 88 | 3804 |
| | տումբա | 1 | 311 | 311 |
| | գրքերի ֆոնդ | 29800 | | 18420 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | . | 23676 |

Հանձնաժողովի նախագահ՝

Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Յու. Վարդանյան

անդամներ՝

1.Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գ.Մարգարյան

2.Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Վ.Մարտիրոսյան

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով` *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն հավելվածներ թիվ 1,2 և 3-ի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված 1
Նոր Խարբերդ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 27-Ն որոշման

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 36

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200.000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 130.000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 116.000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 110.000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 204.000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/, /2.3-2/ | 2 | 195.000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/, /3.1-2/,/3.1-3/ | 3 | 140.000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/, /3.2-2/ | 2 | 130.000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/, /3.3-2/ | 2 | 120.000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Գործավար | 1 | 120.000 |
| Վարորդ | 1 | 106.000 |
| Պահակ | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Հարկահավաք | 2 | 110.000 |

| ԳՐԱԴԱՐԱՆ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Տնօրեն | 1 | 90.000 |
| Գրադարանավար | 1 | 80.000 |

| ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Տնօրեն | 1 | 120.000 |
| Գեղարվեստական մասի ղեկավար | 1 | 100.000 |
| Հրահանգիչ | 1 | 80.000 |
| Կազմակերպիչ | 1 | 80.000 |
| Կազմակերպիչ՝ միջոցառումների լուսաբանման գծով | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Բանվոր | 1 | 80.000 |

| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ /գյուղապետարանի պայմանագրային աշխատողներ/ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Աղբատար մեքենայի վարորդ | 2 | 300.000 |
| Բանվոր | 2 | 73.000 |
| Բանվոր | 1 | 79.000 |
| Ավտոբուսի վարորդ | 2 | 90.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 2
Նոր Խարբերդ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 27-Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 19

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 165.000 |
| Դաստիարակ | 4 | 155.000 |
| Դաստիարակի օգնական | 4 | 85.000 |
| Երաժշտության դաստիարակ | 1 | 95.000 |
| Բուժքույր | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 79.000 |
| Հաշվապահ | 1 | 110.000 |
| Տնտեսվար | 1 | 74.000 |
| Խոհարար | 1 | 115.000 |
| Խոհարարի օգնական | 1 | 74.000 |
| Լվացարար | 1 | 74.000 |
| Պահակ, նորոգող բանվոր | 1 | 110.000 |
| Դռնապան | 1 | 74.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 3
Նոր Խարբերդ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 27-Ն որոշման

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 100.000 |
| Ուսմասվար | 1 | 85.000 |
| Երաժշտության ուսուցիչ | 12 / 377 ժամ / | 1.256.700 |
| Հաշվապահ | 1 | 90.000 |
| Հավաքարար | 1 | 73.000 |
| Գործավար | 1 | 73.000 |
| Պահակ | 1 | 78.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Տալ հավանություն Հ այաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքի նախագծին՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 11-ի
թիվ 28-Ն որոշման

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

## ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագծի

## 1. Համայնքի հիմնական բնութագիրը

| | |
|---|---|
| համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝ | 775.16 հա |
| բնակչության թիվը՝ | 9106 մարդ |
| բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝ | |
| 0-ից մինչև 6 տարեկան երեխաներ | 767 մարդ |
| 7-ից մինչև 17 տարեկան դպրոցահասակներ | 1245 մարդ |
| աշխատունակ հասակի բնակչություն | 6292 մարդ |
| թոշակառուներ | 802 մարդ |
| հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝ | |
| *բնակավայրի հողեր, որից՝* | 293.15 հա |
| բնակելի կառուցապատում | 202.70 հա |
| հասարակական կառուցապատում | 19.82 հա |
| խառը կառուցապատում | - |
| ընդհանուր օգտագործման | 45.88 հա |
| այլ հողեր | 24.66 հա |
| *գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝* | 404.03 հա |
| վարելահող | 197.14 հա |
| բազմամյա տնկարկներ | 59.88 հա |
| խոտհարք | - |
| արոտ | 93.03 հա |
| այլ հողեր | 53.98 հա |
| *արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, որից՝* | 54.91 հա |
| արդյունաբերության | 11.01 հա |
| գյուղ. արտադրական | 33.79 հա |
| պահեստարանների | 10.11 հա |
| ընդերքօգտագործման | - |
| *էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝* | 7.44 հա |
| էներգետիկայի | 0.52հա |
| կապի | 0.05 հա |
| տրանսպորտի | 4.71 հա |
| կոմունալ | 2.16 հա |
| *հատուկ պահպանվող տարածքներ, որից՝* | 9.62 հա |

| | |
|---|---|
| պատմական և մշակութային հողեր | 9.62 հա |
| *ջրային հողեր, որից՝* | 6.01 հա |
| գետեր | - |
| լճեր | - |
| ջրանցքներ | 4.72 հա |
| հիդրոտնտ. և ջրատնտ. այլ | 1.29 հա |
| հատուկ նշանակության հողեր | 6.05 հա |
| Անտառային հողեր | - |
| պահուստային հողեր | - |
| * Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են առ 01.07.2014թ. հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման օրենսդրությամբ սահմանված կարգով: | |
| | |
| Տարածքներն ըստ սեփականության ձևերի | |
| ՀՀ քաղաքացիների սեփականություն | 468.88 հա |
| Իրավաբանական անձանց սեփականություն | 30.42 հա |
| Համայնքային սեփականություն | 265.73 հա |
| Պետական սեփականություն | 10.13 հա |
| օտար պետութ.-ի , կազմ.-ի և ՀՀ-ում կաց-ն հատուկ կարգավիճակ ունեցող անձանց | |
| | |
| Բնակելի ֆոնդն ըստ հարկայնության | 182272.1 քմ |
| մեկ հարկանի առանձնատների թիվը՝ 1302 միավոր | 127394 քմ |
| երկհարկանի առանձնատների թիվը՝ 190 միավոր | 41800 քմ |
| բազմաբնակարան շենքերի թիվը՝ 28 միավոր | 1375.1 քմ |
| | |
| Դպրոցների թիվը | 2 |
| Աշակերտների թիվը/նախագծային հզորությունը | 1169/1402 |
| Մսուր-մանկապարտեզների թիվը | 1 |
| երեխաների թիվը/նախագծային հզորությունը | 126/75 |
| | |
| Խմելու ջրի տարեկան ծախսը | 127,5 մլն խմ |
| Էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը | 105,6 մլն կվտ |
| Գազի տարեկան ծախսը | 108,7 մլն խմ |

Առկա են նաև բուժամբուլատորիա, մշակույթի տուն, գրադարան, երաժշտական դպրոց, մասնագիտացված մանկատուն:

**2. Ռեսուրսների հիմնական տեսակը, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը, խաղողագործություն, ծածկած գրունտի մշակություն**

գյուղատնտեսական հողեր

---

*տվյալներ համայնքում առկա բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային և այլ պաշարների վերաբերյալ*

Այգեգործություն

---

*Համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղեր են համարվում*

-

---

*տվյալներ համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերի վերաբերյալ*

Համայնքը հանրապետական նշանակության Հ-8 ճանապարհով կապված է Արտաշատ մարզկենտրոնի, ինչպես նաև Երևան-Մեղրի Մ-2 միջպետական ավտոմայրուղու հետ: Համայնքի տարածքով է անցնում նաև Հ-12 ճանապարհը: Համայնքը կոյուղացված չէ, ապահոված է էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերով:

---

*տվյալներ համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ*

## 3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունն է անասնապահություն, բուսաբուծություն՝ որից այգեգործություն

*համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները*

---

թիվ 2-րդ դպրոցը ենթակա է վերանորոգման, անհրաժեշտ է կառուցել մանկապարտեզի նոր մասնաշենք. խմելու ջրի ներքին ցանցը կարիք ունի վերանորոգման, անհրաժեշտ է տեղադրել 3 ենթակայան:

## 4. Նախագծման հիմքը.

Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 28-Ն որոշումը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին N 408 որոշումը» և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումը և 2003 թ. մայիսի 2-ի N 625-Ն որոշումը:

## 5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները.

«ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1951-Ն որոշումը», համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, հաստատված Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 16-ի թիվ 3 որոշմամբ, «ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25–ի թիվ 1351–Ն որոշում»:

---

*որոշումների ընդունման ժամկետները, համարը, (կցել պատճենները)*

## 6. Քաղաքաշինական (այդ թվում՝ հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները.

«Ապահովել բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանություն ուղղված՝ ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 9–ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10–ի N 429 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 138–Ն որոշմամբ սահմանված՝ ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրով նախատեսված միջոցառումները:»
«Գլխավոր հատակագծում նախատեսել համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների համակարգերը (հուշարձանի պահպանության գոտի, կառուցապատման կարգավորման գոտի, լանդշաֆտի պահպանման գոտի)»

---

*նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դրանց առկայության դեպքում*

## 7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում)

Ելակետային տվյալներ են հանդիսացել կադաստրային և հողօգտագործման քարտեզները, տվյալներ տարածքի փաստացի օգտագործման վերաբերյալ, տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ, համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պատճեններ:

Համայնքն ունի ՀՀ Կառավարության կողմից 2009 թվականի 3-ի N 1038-Ն որոշմամբ հաստատված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա, որի կազմում առկա է սահմանված կարգով հաստատված սեյսմամիկրոշրջանացման և ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզներ:

Նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ. տվյալներ շրջակա միջավայրի վիճակի, բնության հատուկ պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների վերաբերյալ (առկայության դեպքում), բնական ու տեխնածին արտակարգ իրավիճակների աղբյուրների, քաղաքացիական պաշտպանության, տարածքի սանիտարահիգիենիկ և հակահրդեհային պայմանների մասին:

---

—

*նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներաերկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ □Հանրապետական երկրաբանական ֆոնդ□ ՊՈԱԿ-ից.*

## 8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ

*անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները*

## 9. Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները

ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N 1920 որոշման պահանջներին համապատասխան մշակել «Պարզեցված գլխավոր հատակագիծը՝ հետևյալ բովանդակությամբ և կազմով».

Համայնքի տարածական զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները, այդ թվում ճարտարապետահատակագծային և գործառնական զարգացումը, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների սպասարկման ու զարգացման կազմակերպումը, գծային օբյեկտներ պահպանմանն ու օգտագործմանը, շրջակա միջավայրի, լանդշաֆտների պահպանությանն ու կատարելագործմանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացմանը, տարածքների կազմակերպմանն ու կառուցապատմանը, պատմության և մշակութային հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները, տեքստային մասի Գոտիավորման բաժնում՝ «պահպանական գոտիների օգտագործման պայմանակարգերը (ռեժիմը)»:

Գրաֆիկական մասով պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվում է հետևյալ բովանդակությամբ և կազմով՝ համայնքի առկա վիճակի հատակագիծ /հենակետային հատակագիծ/ սեփականության սուբյեկտների գծագիր, ռիսկերի և սահմանափակումների քարտեզ /համալիր գնահատման հատակագիծ/, ինժեներաերկրաբանական շրջանցման և սեյսմիկ միկրոշրջանցման քարտեզ, համայնքի տարածական զարգացման հատակագիծ /հիմնական գծագիր/, բնության, պատմության և մշակույթի հատուկ պահպանվող տարածքները, դրանց պահպանման գոտիները, պահպանակն գոտիների օգտագործման պայմանակարգերը (ռեժիմը), հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիրը, հատակագծի իրականացման հերթականությունը, կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտեվորման գծագիր:

Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում ներառվելու են համայնքի հողերի օգտագործման սխեմայի, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագծի մշակումը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին N 625-Ն որոշմամբ (ՀՀ հր-ն 03.09.2009 թ.-ի N 1038 որոշում):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ    Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ *համայնքի ավագանին որոշում է .*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2015 թվականի վարչական բյուջեում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ գյուղական համայնքի
ավագանու 2015 թվականի 11 դեկտեմբերի
N 29-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Վարչական բյուջեի 11.1.2 «Պահուստային ֆոնդ» ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 300.0 հազար դրամ, այն ուղղելով 9.1.1 «նախադպրոցական կրթություն » ծրագրի 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ